Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԱՆՁՆՎԵՑ ՌԴ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՇՔԱՆՇԱՆ

Օգոստոսի 21-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Աշխարհի ժողովուրդների հոգևոր միասնության միջազգային ակադեմիայի նախագահ Գեորգի Տրապեզնիկովին:

Հանդիպման ընթացքում պրն Տրապեզնիկովը Նորին Սրբությանը հանձնեց «Հայրենյաց հպարտություն» ռուսական բարեգործական հիմնադրամի կողմից Վեհափառ Հայրապետին շնորհված ՌԴ հասարակական բարձրագույն պարգևկ «Ռուսաստանի հպարտություն» ոսկե շքանշանը: Ամենայն Հայոց Կաթողիկոսին շքանշանը տրվել է ի գնահատություն աշխարհի ժողովուրդների հոգևոր միավորման գործում ունեցած ավանդի, հայ և ռուս ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման, ինչպես նաև խաղաղարարական գործունեության համար:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի հրատարակչական բաժնի տնօրեն Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը և Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ